


տութիւնը, այլ կիրքն է որ պէտք չեղած տեղն ալ տգիտութիւն կը խոթէ, և անով կ'ըսուի թէ տգիտութիւնն է պատճառ ամէն չարեաց :

Այսինք հիմա թէ ո՞րն է ան կիրքը որ ասանկ ամենէն աւելի մեծ չարիք կը պատճառէ : Ի՞ւանց շատ երկայն մտածելու՝ մէկէն առջևնիս կ'ելլէ ինքնահաւանութիւնը, որ օրինակով մը ալ աղէկ կը բացատրուի : Տգիտութիւնը սառոյց է, և ինքնահաւանութիւնը օդին ցրտութիւնն է . ցրտութիւնը մէկդի ըրէ, կը տեսնես որ տաքութիւնը կամաց կամաց կը թափանցէ սառուցին մէջ ու կը հաւեցընէ կը ջնջէ : Իսկ թէ որ տարին տասուերկու ամիս ցրտութիւնը չէրուայ, սառոյցը շատ մեծ մնաներ կ'ընէ . աղէկ քննէ, կը տեսնես որ սառոյցը չէ չարիքն ընողը, այլ ցրտութիւնը : Տգիտութիւնը բնական է մարդկանց երբոր աշխարհք կուգան . Եթէ ինքնահաւանութիւնը իշխէ տգիտութեան վրայ, ու թողջտայ որ ըստ ժամանակին ցրուի, ան ատեն տգիտութիւնը կ'ըլլայ պատճառ ամէն չարեաց . բայց տգիտութիւնը պահողը ինքնահաւանութիւնն է, ուրով ամէն վիճակի մարդ գոհ է իր խելքին վրայ, իր դատմանը վրայ : Խենթն ալ խենթանոցին մէջ իր գործքերը կարգի գրած, ընելիքները որոշած, պահապանին վրայ գանգատ կ'ընէ՝ զինքը տեսնելու եկողին առջին . ինքն ալ իր խելքին հաւանած՝ պահապանին նախանձոտ բնութեանը վրայ կը զարմանայ, որ իրեն խելքէ դուրս բաներ ապսպրելով՝ թողջտար որ իր մտածած կերպովը բանի հետ ըլլայ ու կարգադրութեալ կեանք մը անցընէ : Ի՞սբաւականը, գեռութիւնը գանգատ ալ ունի պահապանին վրայօք . այնչափ նախանձոտ դէշ մարդ է, կ'ըսէ, որ ամէն եկողին առջին ինծի համար խենթ է կ'ըսէ, անունս կը կոտրէ, և թողջտար որ եկող հիւրերուն հետքիչ մը խօսակցիմ :

Այժէ այսպէս տիրած է վրանիս ինք-

նահաւանութիւնը, ամենեկին բան մը առաջ չենք կրնար տանիլ՝ ինչուան որ ասոր ճար մը չընենք, մեզմէ չէրուացընենք : Բայց ես կը տարակուսիմթէ ինչպէս կարենանք պիտիյաղթել կործանել այս ինքնահաւանութեան ժայռը. վասն զի անանկ սեպացեալ ժայռ մըն է որ վրան գործիք չիբանիր . թէ որ ցրտոյ նմանցընես, անանկ ցուրտ մըն է որ օգոստոսին արեն ալ չտաքցըներ : Ի՞յսպիսի սարսափելի վնասակար կրքի մը յաղթել ովզ չուզեր . մանաւանդ երբոր յիշէ անկէ առաջ եկած չարիքները՝ որ տգիտութեան մէջ մնալու պատճառ կ'ըլլան : Տուն չկայ, տեղ չկայ ամէն դարումէջ որ անոր վնասը քաշած չըլլան . մանաւանդ մեր ազգը և մեր ազգայինք : Ի՞նչուշտ ամէնքը կը սպասեն օր մը առաջ տեսնելու անոր կործանումը : Ո՞ենք ուրիշ յօդուածի մէջ կը ջանանք անոր հիմք փորել :

Հ. Պ. Մ



Ն Ե Ր Բ Ո Ղ

Յ Ա Մ Ա Ս Տ Ո Ւ Ն Ե Ւ Ւ Ս Ո Ւ Ր Ր Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ե Զ Ո Ւ

Հ Ա Ց Ո Ց

( ) Ր է Ն Փ Ե Ն բնաբոյս և գեղեցիկ սովորութիւն ստորայնումն վիճակելոց բնակութեան, զբարձրացեալսն՝ իհասարակաց պայմանէս առաւելութեամբ ինչ վարուց՝ գովասանական բանիւք և ևս բարձրացուցանել . իտօնս ամենախումբս ճառել զկենաց նոցա հանդիսից, յիշատակաւ նոցա զուարձանալ և քաջութեամբքն պանծալ . ինախանձուկս անձին, ի խրախոյս ընկերաց, և յիստուծոյ՝ երախտեաց գոհութեան մատուցումն : Ուրով զմիտս հանձարով զարդարեալս պանծացուցանեն հոյլքն իմաստնոց ի կաձառս իւրեանց . որով զըստ աշխարհիս խարհրդականս և ճարտար քաղաքագէտս՝ իշխանականն պատուէ

ատեան . որով և հայրենիք զնալաստա-  
մատոյցըն ինքեանց զկենցաղօդուտ  
մարդիկ՝ մեծապէս հռչակեցուցանեն .  
գիտէ և եկեղեցի զիւրսն հանդիսա-  
ցուցանել սուրբ նահատակս :

Յատենական՝ ի յայս հանդէս հրա-  
ւիրեալ և իմ այսօր՝ ի պատկառելի  
և իմաստնախումբ ժողովոյ հարց ,  
եղբարց , վարժապետաց և աշակեր-  
տաց , և 'ի քէն մանաւանդ , Տէրդ  
մեր աստուածապատիւ և Հայր հո-  
գեոր , վարիչ վարժարանաց և գա-  
հագլուխ ակմբահոյլ պարուս . մինչ-  
և բաժանեալ զմիտս ընդ այս և ընդ  
այն՝ առ 'ի յայրընտիր վեհիցն առ-  
նել գովայնոց , սիրտ 'ի վեր յիս ըն-  
թանայ հրձուելով և հառաջելով .  
յանդիման ածէ զերջանիկ աւուրսն  
Այրարատոյ՝ յորս փեսայանայրն՝ ի  
հարսն ցանկալի յիմաստութիւն , 'ի  
տանէն Յունաց հրաւիրեալ յիսկա-  
ձեմն կոյս . և բորբոքեալ տենիւ կամի  
հռչակել զփառս փեսաւերացն , զիմաս-  
տուն և զսուրբ Այրգմանչաց մե-  
րոց , պատճառս եղելոց այսմ և մեր  
և համորէն մերազնէիցս ուսումնա-  
կան հանդիսից : Այլ սոցայս գովու-  
թիւն ոչ 'ի մինդ յայդ բովանդակի  
գլուխ , այլ բոլորիւք գերազարդեալ  
տեսանին քաջամասնութեամբք . և  
կաձառք և տաճարք և ատեանք և  
հայրենիք՝ սոցա պատկառ կան և մասն  
քոյ պարտին : Այկայն ինձ այսոքիկ  
որչափ յորդորականք 'ի ներբող , նոյն-  
քան և յարհաւիրս կարգեալ կան .  
քանզի յայնքան նոցա շնորհսն հայե-  
ցեալ և յիմ տառապելութիւնս՝ նե-  
ղիմ 'ի խորհուրդս մտաց տեղի տալ  
յատենէս : Օ ի որպէս բնաւ իշխե-  
ցից ես թափուրս և ներգեեալս յամե-  
նայն նոցայն լաւութենց , որ և ոչ զա-  
շակերտութենցին շաւիդ ուղիղս ըն-  
թացայ , վրէպս ես 'ի շնորհաց բանի  
և անգամ 'ի զօրութենէ յօդաձայն  
բարբառոյ , կիսահագագս շնչով և  
բնութեամբս մեռելակիրթ . զիսրդ  
ասեմ ինձ այսպիսւոյ իշխել զիմ իսկ  
ձնողս բանի , զնեղինակս հանձարոյ և

զզարդարիչս հայրենի լեզուի դրուա-  
տել՝ ի մէջ այսքանոյ ատենի : Յորպի-  
սիս բուռն հարկանել եղանակս իսո-  
սից՝ որ ոչ 'ի սպառ նոցա և ձեզ ան-  
վայելուչ կացցէ և քարուակ . արդեօք  
'ի նրբութի խոհականին նկրտեցայց  
պատշաճեցուցանել զբանից ողորկու-  
թիւն . այլ ոչ ապաքէն Այնկանն լեզու  
անզուգական զիս նշաւակ կացուսցէ .  
թէ 'ի հռետորականսն միւցայց քա-  
ջոլորակի պերճախօսութիւնս , ոչ  
աւանիկ Ա երծանողն Ամբրէ շա-  
ռագունանս զերեսօք զիս յետս դար-  
ձուսցէ . Եթէ յիմաստասիրականս  
փորձեցից իջանել խորս , քաջ գիտեմ  
զիս խեթկիլ յԱյաղթէն Պաւթէ .  
և Եթէ 'ի մատենայած հմտութիւն  
վստահացայց լսս 'ի խաւարէ բացա-  
փայլել , ահա այժմէն շլացոյց զիս  
ջահն Այրենեան . իսկ Եթէ 'ի սուիչս  
և 'ի թռիչս ինչ բանաստեղծականս  
ձախր ասից , երկնչիմ թէ յանկարծ  
Պաւիթ ոմն քերդող կամ Ատեփա-  
նոս՝ ի վեր երեեալ զիս նկուն արաս-  
ցեն . ապա Եթէ յախորժելիսն իմե-  
կից յաղուական վիպասանութիւնս ,  
յոյժ կասկածեմ թէ յանհարթու-  
թէ քերածոյս քստմնափուշլիցի փափ-  
կալուրն Աղիայ . և համայն յոր և  
հնարս մտաբերեցից՝ գիտեմ զիմ կո-  
րանս . վարդապետք Ճարտարք արձա-  
նացեալք յամենայն մուտս պողոտայից  
բանի , կամ քաջօրէն արշաւել կամ  
ընդ կրունկն հանջել ինձ հրամայեն :  
Պիտեմ ապա զինչ արարից . արհա-  
մարհեցից զվհատութիւն , այլ ընդ նմին  
և զմիգն քաջ հանգիստութեան , որ  
զպարտս մոռացեալս յայսքան դարուց  
գամ հատուցանել վեհիցս արանց , և  
ոչ պարդես ինչ ընծայել . զպատմա-  
կանն պարզութիւն համբուրեցից ես ,  
Ճահողագոյն զայս գտեալ և բարձրու-  
թեն նպատակիս և իմումն նուաստու-  
թեան , և թերեւս և օգտի հասարակաց  
ծանօթասէր մտաց . և երջանիկ ինձէն  
զիս վարկայց , Եթէ կարացից և այս-  
պէս զբազմապատիկ և զհոյակապքա-  
ջամասնութիւնս սոցա 'ի գէմս ածել :

Ա ասն որոյ առ ձեզ իսկ նախ համբառնամ զձեռս , ով մեծք յերկրի և յերկինս , որոց գովութիւն ճշմարիտ՝ բարձունքն են յոր կայքդ և վայելէք . ակն և յիս կառուցէք 'ի մատուցեալս զձէնջ ճառել , որ զի մի անբաւական ՚ի փայլեցուցանել զգերագոյն ձեր փառս՝ աղօտ ինչ կացուցանիցեմ յատենիս :

Դերագոյն քան զամենայն տուրս բարձրելոյն՝ որպէս առանձինս մարդոյ զբանին գիտեմք չնորհ , զնոյն տեսանեմ և 'ի բազմապատիկ սիրալի պարգևս՝ որոց մասնաւորեաց Տէր զազդս ինորդոմայ : Առ որչափ մեծ են չնորհք այսր իրի՝ այնքան վեհագոյնք ինձ 'ի մերսն այնոքիկ , որք աջակից իմն վերնոյն եղեալ՝ գեղեցիկ հնարիւք հաստատեն 'ի համասեռս իւրեանց զնոյն չնորհ : Այս ձիր մտաց ընդլուսոյ հոգւոց ծագեցաւ 'ի հայս ՚ի ձեռն Լքգարու . զոր թէ անընդհատ ըստ նմանէն արծարծեալ էր ազգիս՝ ունէր անդստին ճոխանալ 'ի պարգևսն բանաւորս . այլ տեսչութիւնքն անքնինք զսերմն ևեթ չնորհիս արկեալ յանդաստանիս մերում , զբարգաւաճանսն այլումթողին ժամանակի կամ մշակի : Դրիգորիոս և Տրդատէս արօրագիր լեալ անդ յետերից դարուց արեամբ և քրտամբ , վերընձիւղեցին բոյսս կենսունակս , այլ ոչ հասկս կատարեալս : Աերսէս՝ երկակինոցա ժառանդ հոգւոյն , կենսաբուխ ջրով սիրոյն աձեցոյց զբոյսսն , այլ տակաւին ոչ արձակեցան պտուղք : Արիցս այսակէս մերձեալազգիս յիմաստութեանն առիթ , և երիցս խափանեալ լինէր . մինչև յարեաւ Աահակ հայր հանձարոյ , մինչև յարեաւ Աեսրով բոցաւորիչ մտաց , և անհնարին երկամբք ճգանց զդրախտն բանաւոր յարդիւնս ածին . ՚ ( յաղիկը երևեան , ցան յերկրի մերում . թզենի արձան , կեաց զբողբոջիւր , որթք մեր ծաղլաւ կեալք ետուն զհոտ իւրեանց . . . ինարգմանիչք երևեցան , հայկեան

տառից բողբոջք արձակեցան և հոտգիտութեն ծաւալեցաւ ընդհանուր : Կ որ տնկեաց , էր որ աձեցոյց , և էր որ 'ի կատար հասոյց . այլ սոքա միայն հասունացեալք ընծայեցին մեզ Ճաշակս քաղցունս :

( Կինակաւ հարցն առաջնոց քաջափորձք Աահակ և Աեսրով , և ջանից նոցա ոչ անգետք , տեսին յայտնապէս , զի մինչ ոչ իցէ կատարեալ հաստատութիւն առեալ ուսմանց 'ի հայս՝ ոչ կրօնք յակաստանի կացցեն և ոչ կրթութիւն ազգին . ապա ամենայն ջանիւ հետամուտ լինէին գրտանել և արկանել զհիմն զայն հաստատուն . առ որ յարդարեցին և առին իւրեանց մեծ օժանդակ զբարեսէրն զայն և զբարեացապարտ թագաւոր զլ ռամշապուհ : Աւրախ լեր արդ երկիր հայոց , և կաց պատրաստ , զի շնորհք մեծամեծք առ դրունս քոեկեալ հասեալ կան :

Հրովարտակ արքունի քահանայապետին խառնեալ կնքով ընթանայ ընդգաւառս հայաստանեայց՝ 'ի տիրական հրաւիրելով հանդէս զառաքինիս : Արովեալ սարսին ընդքաղցր գաւազնաւ Առամշապհոյ տաւաղեալ գաւառք , և կարձեն թէ ցանկալին խաղաղութիւն դարձեալ մերժի յերեսաց իւրեանց , եթէ դարձեալ Պարսիկն ուխտագրուժ սրով և հրով մըտանէ 'ի հայս , դարձեալ անիրաւասէր ազինք հիւսիսականք արշաւանս դնեն 'ի բազմագանձ աշխարհս մեր : Այլ ճն անդր 'ի բաց կացցէ երկիւղ , հալածեսցին կասկածանք . խաղաղութիւն ոչ թէ միայն ոչ խոռովի , այլ և խարիսխ հաստատութեան խնդրէ : Հրամանն արքունի տարփողեալ պահանջէ նահատակ՝ ոչ 'ի մարտ պատերազմի , այլ 'ի կայս անդորրու . թշնամի , տգիտութիւն և անիմաստութիւն , զոր մտաւոր զինուք հերքեսցէ հայատան յիւրոց սահմանաց : Հապա , յառաջ մատիցեն մանկունք մտահարուստք :

Յայս աւետիս՝ սրբէ հողագործ զարտասուսն ապաֆոյժ, վաճառականն հանէ 'ի թանգարանէ զմթերսիւր, և տանուտեարք նստին անահք 'ի դարպասս տանց . և 'ի հարիւր բիւր դերդաստանացն Հայոց արձակին որպէս ձագունք թիւահերք՝ մատաղ մանկունք, բազմութիւնյոյժ, գունդ կազմել առաւելքան զարտաշիսեանն բանակի : Ի՞այց ոչ զօրականք ոմանք վարկապարազիք ինդրին առ մեծ և տարօրինակ գործ պատերազմիս այսորիկ, այլ միտք կատարեալք առ 'ի զօրավարութիւն աշխարհօրէն բանակաց . աշակերտք այնպիսիք, զորս բնութեան՝ որ դայեակն է առաջին՝ վարժապետս յարդարեալիցէ անդըս տին :

Ի՞նտրին ապա մի 'ի հազարէ և երկուք 'ի բիւրուց, տասանորդին և նոքա, և այնպէս քաջընտիրքն և կատարելագոյնք մտաւոր և բնական բարեմասնութեամբք՝ առաքին առ արքայ . որպէս ըմբիշք իւղագլուխք մենամարտելընդ գոռ տաղին, և զբաղդաշխարհին թափել'ի համօրէն կորլատենէ : Ի՞աշխէ զնոսա աստ նախահոգակն որպէս զիարուգոդոնոսոր 'ի մարզարանս պատրաստեալսյայն սակս 'ի Ա՞եսրովպայ և յիսահակայ, անդյառաջին կրթանսն դեգերել առ ժամանակ մի, մինչեւ միւսանգամ'ի գործ մատիցեն, և քաջքն 'ի քաջս առաքիցին հրաւիրակք և ընդունակք իմաստութեան : Օ որ օրինակ հրաման ելեալ թագաւորական տօնից երեելի շքով, ժողովիցին դասք արուեստաւորաց և վարդապետաց 'ի գործարան մի մեծ, և զդրունս ամրացուցեալ զի զգործ հրամանին անզբաղ 'ի կատարումն ածցեն . յանդուլիմն շարժման է տեսանել զնոսա, ձայնք սանձեալք և շունչք իսկ ընդհատեալք, միայն կոփիւնք կուանաց, սոյլք սայլից նախարակաց, և գոփիւնք իմն և խառնաց տանն . և ժողովութեալ զի զգովագութեան զեղանի արտաքոյ տանն . և ժողովութեան ըստ հետաքնին սովորութեանն շուրջ անցանէ,

հարցանէ, և ակն կալեալ մնայ թէ երբ աւարտեացին կազմութիւնքն և հանդէսն երեւիցի : Այսպէս և մերս ժիր գործաւորք, մանկունքն փութաջնք մարզելին 'ի վարժս ուսմանց, 'ի մակացութիւն լեզուաց ասորւոյն և յունին այլ և պարսկայնոյն, 'ի յարմարութիւն տառից նոցա առ մեր լեզուս, և 'ի փորձս դանիելեան նշանագրաց : Այ զի նախարարյարքաւունի դրանէ գայր այց առնել յառաջադիմութեանցն . էր զի Այսակ ինքնին գայր տեսանել և քննել . և Ա՞եսրովպա ստէպ ստէպ մտանէր անձկաւ և ելանէր տիրութեամբ . քանզի տեսանէր զաշակերտսն արդարե գերազանցքան զակնկալիս, այլ զյաջողութիւն իրացն կազս 'ի կազս . և քաջ 'ի վերայ հասանէր՝ զի ցորչափ օտար լեզուաց աթութայք զմերս Ճգնեն, սա ոչ երեկ յաջողի : Հնարք հայկեան տառից այնուհետեւ անհրաժարելի պէտք Ճանաշին : Ա արժապետն յաշակերտացն պարտեալ թողու զնոսա միւսանգամ, և իբր մայր զբուծոյ երթեալ, գարձեալ գեգերի ընդ Հայս, ընդ Յոյնս, ընդ Ասորիս . և զի համառօտութեամբ հարցուք զբանս, զամենայն զառ 'ի մարդկանէ հնար փորձեալ և ինչ ոչ օգտեալ, գառնայ առիւրսն, և յայնմհետէ զիրին հնարաւորութիւն յլլուսուած միայն ապաստան ցուցանէ . առնու պաշար զհայցուածս աղօթից նոցա և մեծապէս հաւատով քան զլովսէ՝ դիմէ 'ի լեառն : Ի՞շակերտացն՝ զուգակիրք վարդապետին լոեցուցեալ առ վայր միզսովորականվարժն, յանդաստակս երկնի տատանին . զեսանաց կարեաց հասակին զի բաց գնայն հրամայեն, արձակեն զկոճկէն պարեգոտիկսն և խարազնազգեստ տանջեն զթիկունս և զանտիսեղծ լանջս, ծղի 'ի վեր մարզեն, դիսակ 'ի վայր տարածեն, ճակատս ծեծեն, բոկագնացք լինին 'ի վկայարանս, ցայդանան սազմոսիւք, զկերակրիկն անգամ հազիւ ծայրիւ մատանց առնուն, և միոյ պահու հան

գըստեամբ գիշերայնով շատանան . և զայս միայն հանապազ գուշն . Աստուած բարի , ողորմեա մեզ . Աստուած քաղցրալուր, խոնարհեցո զուն կըն քո . տես տեր յորդիս քո , գթա տեր՝ ի վարդապետս մեր և 'ի հայր , տուր և կատարեա զինդրուածս նորա , զի համարձակ լիցուք օրհնել զքեզ և մեք և ամենայն ազգս մեր հայրենի բարբառովս այսու : Ազնիւ մանկունք , սիրտք երկնառուէ , անմեղութիւն վշտակիր . սրբեցէք զարտասուս , սրբեցէք և արկեք զձեօք զպձղնաւորդ և ելէք . քանզի ոչ հանդուրժեցին երկնք աղփողորմ գուժիդ , լուծան զիջան . շնորհեալ է ձեզ , շնորհեալ է Անսրովպայ , շնորհք վերին լցին զծոց նորա և ծնան տառքն հայկազնի : Անանէր Անսրովպա ՚ի նորոյն Ախնեայ լայնալանջ պարզեալ զաստուածագիծ տախտակս կրծոցն , և աշխոյժք աշակերտացն երադադոյնս քան զէջս նորա՝ զվերելսն իւրեանց աւոնէին . լոյս աստուածութեանն տակաւին փայլէր ՚ի դէմս նորա , և ոչ կարէր թագուցանել ոչ զշնորհն և ոչ զինդութիւնն . մինչեւ թափեալ զնոլաւ մանկանց՝ զոտս և զձեռս համբուրելով կորզեցին ՚ի նմանէ և ձաշակեցին զքաղցր գիւտոն , մինչեւ համաւեալ թագաւորին և հայրապետին , որ ՚ի յովնաթանեան երագութենէ ոտից միոյ յաշակերտացն առեալ զաւետիսն՝ բազում ամբոխիւ և հանդիսիւ գային ընդ առաջ : Աւ այսքան յօժար և ակնկալու ելանէր Ասրայէլընդ առաջ Ասվիսի զօրէնսն աստուածատուրս զպարծանս իւր ընդունել . և ոչ թերեւս աշակերտքն և ախտաժէտ ժողովուրդն զի՞րիստոս , յիջանելնորա ՚ի Ուարորականն լեռնէ :

Արդ զառ ՚ի վերուստն իրակերտեալ նիւթ՝ ձարտալք մարդկան յերիւրեն առաջնորդութեամբ հոգեկիրն Շատելիէլի . ՚ի յարդ և 'ի զարդ մտանեն և 'ի պնակիտս տառատպին ձայնալիր , հաւեղ , քաջա-

հնդիւն և ամենազարդ այբուբենք հայոց , և լեզուն ադամային իբրև գետ մի հզօր յօտար և 'ի վայրապար առուս զարտուղեալ՝ դարձ առնէ 'ի հուն իւր բնիկ , և դարիւ և դարիւ ընթանայ : Անդ է տեսանելզեռանդն և զինդութիւն մանկանցն . որոց ՚ի մոլութիւն իմն սուրբ և 'ի զայրուցս վառեալ՝ ոչ ունին ժոյժ ՚ի կայթից և 'ի ծափս տալց . մին խլեալ զիսաղտախուղտ ասորնայսն զգետնի հարկանէ , միւսն զելլենական փստածաղիկ ծեքածուռ ծեքենայս ծուենս ծուէնս արարեալընդ օդ հաննէ . ոմն՝ ՚ի բաց գնացէք , գոչէ , տառք խեցբեկք և օտարախորթք , որք զայսքան ամս զլեզուս մեր կապեալ կաշկանդէիք . արդ ծանրալեզուքս պարզախօսք լիցուք , և ձեռքս լքեալք համարձակք ՚ի գիր . այլ ոմն՝ մի ևս նշանալցոյն և թարգմանք , ասէ , այլ որ ընթերցցի՝ նոյն և ձառեսցէ , և որ լուիցէն՝ իմասցի . մի այլ տառապիք վեհքդ Ասհակ և Անսրովպա ՚ի մեկնութիւնս գրոց սրբոց , զի համօրէն եկեղեցիս հայ ակրնջօք լսէ հայեցի ձայնիդ . արդ այժմ ծնան որդիք հայկազանց . արդ այժմ զարդարեցան գիւտանք թորգոմեան . արդ այժմ պայծառացաւ եկեղեցիս հայաստանեայց :

Այսպիսի բանիւք և այսպիսի եռանդեամբ տային այնուհետեւ զանձինս ՚ի քաջ հրահանգս գրերոյն , և միքան զմիառաւելեալք պատրաստէին ՚ի հանդէս արքունի , զի արժանաւորք լինիցին առաքման յօտար աղինս յուռսումն կատարեալ և 'ի թարգմանութիւն : Այս նոցա այնպէս կազմեալ , մերձենայր փորձն և ժամադրութիւնն հասանէր . յասպարէզ կոչէին նահատակքն . ելանէր երջանիկն և սիրելին թագաւորաց ՚ի հովանոցէն իւրմէ , և աջակիցն մին հասանէր հայրապետն սուրբ . դղրդէր աշխարհազօր բանակն արքունի և ամենայն հայակոյտ ամբոխն զհետ փողեալ՝ դային հասանէին ՚ի նախասկիզբն հանդիսի սիրա-

լի դասուն : Ե փորձ մատչեին քաջքն  
և ընտիրքն , աննման մանկութիւնն .  
բնատուր հանձարովն մարտ ընդ մի-  
մեանս բերեին , լեզուօքն յօդանային ,  
երկայն չնովք շահատակեին , ասիւք ,  
վերծանութեամբ և թարգմանու-  
թեամբ մրցեին . ընդ միմեանս ել-  
ևել առնելով և զիրար գլելով՝ ընդ  
յետին կորզանս նրբութեան անցեալ ,  
անդ կերպարանէր ջոկատ ամէնընտիր  
պարու վսեմական Ա աթ սնիցն “ տրա-  
մախոչից , քաջուշեղաց , փափկավան-  
կից , երկարոգեաց , կատարելոց , ա-  
մենայարմարից , : Ա եսրովալ ինքնին  
մայրն իմաստից և դպիր Հոգւոյն՝  
սքանչանայր ընդ քեւորդեակն իւր  
դեռաբոյս , և անդստին գուշակէր ’ի  
նմա զպարագլուխ աշակերտացն և  
զինքեան իսկ գերազանցողն . Ա ահակ  
ընդ սիրեցեալն իւր ակնարկէր աղաւ-  
նատիան Ա զան , որ յԱ ճրունեաց  
բարձէն յիւր հովուանոցն թեա-  
ծեաց . ոմանք պշուցեալ մատնանիշ  
յուցանէին զնրբայօն մի և լայնաձա-  
կատ պարմանի՝ եկեալ անդուստ ’ի  
հոմերաքարոզ մարզից “ Հեռաւորն  
Ա փզոնի , ուր արծաթ կղկղի , , և ուր  
աղ լեռնանայ , զկողքացին Ա զնակ .  
և ոմանք խանդաղատէին ընդ հեղիկ  
և նուրբ նայեցուածս Ա մատունոյն  
Ա զիշեայ . այլ ոմն զԱ ազարիկն տե-  
սանէր մանուկ , զոր ’ի կողմանս Ա բ-  
բերդոյ ’ի Փարպի երբեմն ընդ ման-  
կտոյն ’ի խաղի ծանեաւ . և այլ ոմն ’ի  
կողմանց Ա բաց տեսանէր եկեալ զվար-  
դապետասէրն Ա որիւն . անդր հասա-  
նէին և նրբահանձարն Ա աւիթ ’ի  
հարքայ Տարուբերանոյ , Ճշմարտա-  
սէրն Ա բձան ’ի Ա ասպուրական եղե-  
րաց , Ա եռնդ յայրարատեանն Ա ա-  
նանդայ՝ այժմէն վառեալ ծերունա-  
զարդ խոչէմութեամբ , և ’ի Ա այսոց  
ձորոյ զուգընթացնմին փարելն Հ ով-  
սէփ : Ա այսպէս ’ի քաղցր ալեաց Ա .  
լիւսեայ մինչ ’ի վայրենի կոհակս  
Ա րկանաց , ’ի վեցհարիւր և ’ի քսան  
դաւառացն Հ այսոց՝ վաթսունք միայն  
ծաղկաքաղք սսկեփունջք չնաշխար-

հիքը կազմէին : Ա վաթսունք վե-  
հագոյնք քան զվաթսունս Ա ողոմնի ,  
որք սուսեր յազգեր կապեալ զմիտսն  
հատուս , անցեալք ընդ արհօրանս  
գիշերոյ՝ ընդ մութ տգիտութեան ,  
շուրջ կայք զգահաւորակաւ Ա ռամ-  
շապհոյ , որ զիմաստութիւն հարսնա-  
ծէ ինքեան և աշխարհին իւրոյ :

Փութայր ապա և ինքն արքայ ,  
կարկառէր զգաւազանն տէրունի նը-  
շանակ հաճութեան . բանայր զգանձ-  
որն , և զհոռոգ ռազմամուտ զօրա-  
կանին՝ զհամբարեալն շահ բազմա-  
մեայ խաղաղութե աշխարհին , զիւ-  
րոյ գեղեցիկ խոչէմութեանն սլուղ-  
բաշխէր ’ի ծախս Ճանապարհի նոցա .  
հրովարտակս գրէր առ ամենայն նա-  
խարարս և գաւառատեարս , առ իշ-  
խանս Ճանապարհաց և օթից տե-  
սուչս , պատրաստել նոցա ազատ և  
դիւր շաւիղ . և մանկանցն խոստա-  
նայր վերակացուս կարգել զնոսաթա-  
գաւորական դպրոցաց և դիւանաց ,  
և բանիցն առհաւատչեայ՝ անդէն  
զյառաջադէմն ’ի նոցանէ առ իւր  
կալեալ կարգէր ’ի գլուխ դպրոցաց ,  
զԱ և ոնդ և զԴ անան և զԴ ինդ ,  
զԼ չնովք ; զԱ ուշէ , այլովք հան-  
գերձ , յետ սակաւուց առաքել և  
զնոսայուսացուցեալ հանդերձ ման-  
կագունիւքն : Իսկ մեծ հայրապետն  
Խահակ օրհնաբաշխ աջովն յուցա-  
նէր նոցա զհազարս և զբիւրս եկե-  
ղեցեացն Հ այսոց , և այլ ինչ ոչ ա-  
սէր . իսկ մեծն Ա եսրովալ մատնանիշ  
առնէր նոցա զդպրոցսն զորս երբեմն  
ինքն Ա երսիսի գործակից սերմանէր  
’ի Հ այս , և յետ նորա առաւել ևս ա-  
ճեցուցեալ՝ մնայր ուղղել նոցին վե-  
րատեսչութեամբ : Ա զատ և ոստանիկ  
մարդիկ խոստանային դաստիարակս  
իւրեանց երիցունս առնել զնոսա . և  
ժողովուրդն ընդարմացեալ խրախոյս  
կարդայր և ապէր . և աշխարհն ա-  
մենայն յուղարկ երթայր նոցա հա-  
րուստ ասպարէզս , և իբրև ծով մեծ  
յուղեալ վարեալ ’ի խորս՝ դառնայր

օղանէր անդրէն յափունս իւր :  
 Իսկ երջանիկքն ուղևորք ո՞րպէս :  
 “Երեսցէ ինձ աստանօր ատեանս հա-  
 ռած տալ իմոցս բանից , և զՃար-  
 արի որումն հռետորի ասացուածս  
 մէջ մատուցանել .” Եւ մերքս ա-  
 մենեքեան , ասէ , գումարէին , հան-  
 դերձէին , կազմէին , պատրաստէին ,  
 յուղի անկանէին , երկայնաձիգ Ճա-  
 ռապարհ հորդէին , ’ի ծովս ընթա-  
 նային , ’ի թես թեթես թռչէին ,  
 յերիվարս փայտակերտս ելանէին ,  
 զերասանակս լայնալանջս ըմբըռ-  
 նէին , զխարազանս օդատարածս  
 , յածէին , ’ի սասանուտ դաշտս ան-  
 հաստատս յածէին , զմահքան ըզ-  
 կեանս միշտ ընտրէին , աներեսյթ  
 նպատակի ուշունէին . զորոց զինի  
 բազումք յիւրաքանչիւր դարս և ’ի  
 ժամանակս հանդիսանային , նա-  
 խանձաւոր գործոց բարեաց լինե-  
 լով .” Աքանչանային գաւառք ընդ  
 որս անցանէին վարդապետիկքն Հայոց .  
 Երկիր թինդս առնոյր զնոսա կրելով ,  
 և ծով ուռնոյր և ամբարտաւանէր  
 մկանամքքն՝ առաւել քան ’ի տանել  
 անդ զտորմիզս Աշխակայ և Արտաշի-  
 սի , և զլալսադա գերի բարձեալ ’ի  
 Հայս ածել : Աշխարհն Ասորուոց նը-  
 կուն իմն եղեալ նկատէր զմանկտին  
 զայն՝ որ ոչ միայն զիւրսն մերժեալ  
 խրթին տառս , այլ և ընդ դիւանս  
 Երգեսիոյ թեթեակի նաւեն . և ա-  
 շակերտք Աշիրեմայ բացեալ զդրունս  
 իւրեանց՝ օրհնութիւնս դողդոջունս  
 հասուցանէին արշաւասոյր գարշա-  
 պարացն : Աեսարիա՝ ծնունդ Աքա-  
 մայ քաջին , որ զԴիրիգոր և զԱերսէս  
 օծեալ՝ պարձէր ընդ յաղթական աշ-  
 խարհն Հայոց , այժմ զհոգեսնունդ  
 զաւակս հարցն այնոցիկ պատկառա-  
 նօք ընդունէր և յուղարկէր . Ալա-  
 դայ դղրդեալ՝ նշմարէր ’ի նոսա զօ-  
 տարազնեայսն որք ’ի ծագաց աշխար-  
 հաց դային բառնալ՝ ’ի նմանէ վա-  
 ճառս իմաստից . Աթէնք ոչ անձա-  
 նօթ հայկեան հանձարոյ՝ յիշէր զՃար-  
 տար լեզումն՝ որ զգաղացուցին

“զզաւակս Աեկրոպեայ „.յիշէր զհա-  
 կաձառութիւնս անպարտելի մտացն ,  
 զտագնապս Բարսզի և զլ' ստուածա-  
 բանին վերահաս օգնութիւն , և ըզ-  
 մեծապանծ շուք սոցա տեսեալ սա-  
 սանէր և խիթայր՝ թէ արդեօք ’ի  
 սպառ մոռասցին հռետորքն հինա-  
 ւուրցք : Եւ Ազեքսանդրիա որ զհինն  
 Ամֆիս և զնորն Ատտիկէ յինքն կրել  
 պանծայր , ընդունէր զսոսա իբրև  
 զնոր Այզոն և Պղատոն և Պիւթա-  
 գոր : Այլ և Հումսուդա ասանջական  
 էալ գերագունին հայ բանասիրաց՝  
 Ճանաչէր զներբողիչ օրիորդին իւրոյ  
 սրբոյ հրաշագեղոյն Հուփսիմեայ , և  
 պատուէր ’ի նմա զազգ և զարիւն  
 Պրոյերեսեայ Ճարտարասանի հայ-  
 կազնոյ , յորմէ ինքն Խագունչի տիե-  
 զերաց ներբողէալ , անդրի նուիրէր  
 Պերճախօսաց թագաւորին : Աշ-  
 խարհն Պաղեստինացւոց յիշէր ըզ-  
 նուիրակս Տրդատայ և Դրիգորի , և  
 գնէր առ ոտս որդւոց նոցին զիւր  
 զհրահանգս : Եւ ’ի վեր քան զամե-  
 նեսեան մեծն Ինւզանդիա ակնն տիե-  
 զերաց՝ չափաւորակից լինէր մեծա-  
 փառ մանկանցն . փոքր միյաւաջ ըս-  
 քանչացեալ ընդ Աթեսրովպալ և եկե-  
 սիաստէս և ակումիտ զնա ձայնեալ  
 և զրաբունականն տուեալ , այժմ զա-  
 շակերտս նորա իբրև զայնպիսւոյ ընդ-  
 ունէր . և գլուխիք եպիսկոպոսաց աշ-  
 խարհին Ատտիկոսք և Աթիննիոսք ,  
 և ուսուցչապետք նոցա ելեւելս զմի-  
 մեամբք առնէին ’ի պատիւ նոցին . և  
 որ զաշխարհիս սանձ ’ի բուռն ա-  
 ռեալ նստէր Խակոդոս՝ յարուցեալ  
 իբրև ծիրանածին զաւակս գգուէր  
 զնոսա , և ոչ ընդ երկիր բերիլ զոտս  
 նոցա կամէր , այլ կառս և դեսպակս  
 յիւրոց դրաց հասուցանէր առ նոսա :  
 Խառուի թէ արժանն շարժէր զնոսա  
 մեծարել զայնոսիկ՝ որք աւագագոյն  
 մտօք քան զապախտաւոր Հելլենս ,  
 զհարց նոցա վաստակս յանքոյթ հա-  
 նեալ ընդ չորեքտասան գար , և հայե-  
 ցի մամլօք ընծայելց էին ’ի վայելս  
 իմաստնոց աշխարհի և ’ի փառու Ա-

բարատայ :

Պիատիւք այսպիսիք ոչ փքացուցին զմեծախոհ միտս մանկանցն , այլ մեծագոյնք դտան յարդիւնս քան նոքա 'ի մեծարանս + քանզի ըստ ասելոյ Ճարտասանին " | վաստակս և 'ի ջանս „ պատրաստելով զանձինս՝ ժրանային , „ տքնէին , աշխատէին , հարցասէր լի . „ նէին , ուսանելով , կրթելով , վարժե . „ լով , վաստակելով , պատրաստելով „ զանձինս 'ի յերկս օգտակարս և 'ի „ գործս շահաւետս . ոմանք զտառից „ գծագրութիւնս շահաւորեալ , ո . „ մանք զիմաստս հաւաքեալ զուսում „ նականն , զբնաբանականն , զերկրա . „ չափականն , զհամարողականն , զե . „ բաժշտականն , զաստեղաբաշխա . „ կանն , զքերականն և զքերթողական , „ զգործնականն և զտեսական իմաս . „ տասիրութի : Ոմանց հաւասարէին „ գիտութեամբք , քան զոմանս վե . „ հագոյնք երևէին , ոմանց զարմանա . „ լիք թուէին , ոմանց բաղձալիք լի . „ նէին , ժրութեամբ , ուշիմութեամբ , „ իմաստութեամբ , խոհեմութեամբ , „ ուսումնասիրութեամբ , գիտութիք , „ բանագտակութեամբ . ընդ ոմանս „ դասէին քննութեամբ , զոմանս պա . „ տասխանւոյ արժանի ոչ համարէին . „ առ ընկերակիցս գովելիք , առ վար . „ դապետս հաճելիք , հարցասէրք , „ բանասէրք , ընթերցասէրք . . . | յւ „ այսպէս ջանային արիանային խի . „ զախէին . . կուտելովլբարդելովլբե . „ ոինս մեծամեծս և դժուարակիրս՝ „ զգրեանց բազմութիւնս և զուսու . „ մըն իմաստութեան , բազմաց փա . „ փագելիս , բաղձալիս , ցանկալիս , „ հեշտալիս , սիրելիս . . : | յառէր իմն արդարե . ոչ վարկապարազի յուսումն եկեալ մերոցս , այլ առ 'ի կողոստել զգանձս իմաստութեան , և մի ինչը ըը . նաւ մի թողուլ : | Մ տայր ինձ յայն . ժամնորոգիլ գեղեցիկ աւուրց | թե . նայ , և 'ի կռիւ մատչել մերոցս ընդ բնիկս յոյն լեզուին . այլ բաղդ վերացեալ էր և 'ի տաճարէն չունաց . դարն այն՝ մերոցն ազատ ասպարէզ

բանայր անդիմադարձ խաղալոյ . փո . խանակ Իւարսղի՝ Ասորովլզօրհնութի . նորա ընթեռնոյր , և փոխանակ Յոզ հաննու . | Մամբրէ զոսկի բերան նո . րա առնոյր և վերծանէր . Պաւիլ յաղթահարէր զջոկս վարժելոցն և եռամեծ և աստուածասէր դաւանիւլ 'ինոցանէ . և | ազար՝ | թենացի առ . ձայնէր : Օ պարտութիւն խոստովա . նեալ և Յունաց և Ասորուոց՝ զհարսիւ . րեանց յառաջ մատուցանէին . և մեր . քըն հզօր զօրութեամբ ձեռին՝ զգե . ցուցանէին նոցա հայեցի պատմու . ձան՝ թարգմանութի գեղեցիկ : Իւա . նայր նոցաև Արբայեցին զիին կտակա . րանս իւր , Վաղդէացին զնախնեացն վիպասանութիւնս , և Պարսիկն զա . ռասպելախառն աւանդութիսն ինչ . և Հայն յամենայնէ մթերէր և գան . ձէր : Իէսք անյագաբար զհետ մտա . նէին , և կէսք բեռնաբարձք դարձ առ . նէին . ոմն հարուստս ամանէր զի մե . ծապէս խնդացուսցէ . և ոմն անժոյժ . դարձ առնէր առ հարս իւր՝ ցանկալի գիւտիցն մասնաւորել զնոսա . և մինչ . դեռ յօտարութե վաստակէին , թուէր իմն թէ 'ի հայրենիս փոխաբերեալք գործակից լինէին | յահակայ 'ի վսե . մական թարգմանութիւն աստուածա . շունչ տառիցն , մանաւանդ թէ յաս . տուածաշունչիսկ թարգմանութիւն , և | Եսորովպայ՝ 'ի կարգել զգեղեցիկ ծէսս և մաղթանս իւրանուն | Մաշտո . ցին և հանուրց եկեղեցւոյ կարգաց . յոր սակս հասուցանէին նոցա և կա . նոնս հայրապետականս , օրհնութիս և ընթերցուածս , և ընտիր ընտիր օ . րինակագիրս գրոց սրբոց : | յւ ամենայ . նիւ այսու տակաւին ոչ շատացեալ , իբ . րև նորափետուր արծուիք միշտ 'ի մանկութիւն կրթէին , և յանդկնա . գոյնք ընդ միմեանս բազխէին , իբրև . չէր ոք օտար որ ժաէր 'ի վէդ դալ ընդ նոսա : Յոտակութեանցն աղբիւր | յզ . նիկ՝ պակասութիւն գրէր ինքեան նուազ քան զհայն զյոյնն գիտել , վասն որոյ թեակից Յովսեփայ սլա . նայր 'ի մայր քաղաքացն Յունաց .

**Չայն տեսեալ կատարելոցն Այորեամն և**  
**Դ կոնդեայ՝ առ նոյն դիմէին փութա-**  
**պէս, և 'ի նախանձ ընդ սոսա շար-**  
**ժեալ Հովհաննու և Ռազմանայ՝ զկար-**  
**ծեցեալ յուլութիւն իւրեանց երա-**  
**գէին և հասեալք լինէին անդր : Այս-**  
**կածէին թէ արդեօք՝ ի մանկագունիցն**  
**և 'ի վերջու եկեղոյն ինքեանք աւագա-**  
**գոյնք և առաջինք՝ գերազանցեալք լի-**  
**նիցին . Երկնէին թէ գուցէ պակաս**  
**ինչ կամ թերի առ հայրենիս տար-**  
**ցեն . վասն որոյ զամենայն մանր քըն-**  
**նէին, և 'ի գիւտս նշանախեցից և**  
**արտասանութեանց անգամ՝ անբաւ-**  
**ական համարեալ զամենայն Ռթէնս՝**  
**դիմէին յՌթէքսանդրիա լինուլ զայն**  
**ինդիր : Ռյայշափ ջան էր մերոցն**  
**Ծարգմանչաց : Որքան նախանձա-**  
**ւորս սոցա անկ իցէ ձեզ լինել, ո ման-**  
**կունք, որք զօրէն նոցա ընդ օտար**  
**աստեղօք յուսմունս պարապիք, և**  
**ակնկալեալ մնայք՝ ի հայրենեաց :**

**Հայրենիք յայնժամ կոչէր և զնո-**  
**սա՝ ի տարաշխարհիկ ուղեորութեցն.**  
**արդէն կիսոց ժամանեալ և խառ-**  
**նեալ էր՝ ի հոգս եկեղեցւոյ և քաղա-**  
**քի . արդէն սգացեալ լացեալ էր նո-**  
**ցա զլու ուամշապուհ և զաղէտս աշ-**  
**խարհին . մինչ կէսք անծանօթ յետին**  
**չարեացն առ անձուկ տեսոյ հարցն**  
**որբոց զորս նշմարէին մտօք մերձեալս**  
**'ի դուռն տապանի, փութային ժո-**  
**ղովին 'ի ժամադրութիւնս Ռիւ-**  
**զանդիոնի, և անդուստ թուչէին ծո-**  
**վաչուք և ցամաքաթեք, հասանէին**  
**'ի սահմանս հայոց, և զհող եղեմին**  
**'ի նմա համբուրեալ՝ դէս ուղիղ զՃա-**  
**նապարհ արքունի և հայրապետական**  
**աթուուցն ունէին :**

**Ռակայն զմէ Ճգնել ինձ այսուհե-**  
**տե զբանս, որ ոչ ևս ախորժէ յառաջ**  
**խաղալ . առ իմէ միւսանդամ փեռե-**  
**կել զսիրտս տիսրական յիշատակօք .**  
**և ո աստանօր ոչ ընթացաւ մտօք 'ի**  
**հրաշալին յայն դրուագ Այորենեան .**  
**“ Եւ մինչնոքա զմերն յուսային դարձ**  
**“ . . . համայն և մեք փութապէս դիւ-**  
**մեալք 'ի Ռիւզանդիոյ՝ յուսայաք**

“ հարսանեաց պարել, անվեհէր ե-

“ րագութեամբ կրթեալք, և առա-

“ գաստի ասել երգս, . . . Ծխողից ար-

“ դեօք նմա յառաջ զբանսն խաղացու-

“ ցանել, եթէ իմովք ցուրտ բանիւքս

“ զհրայնոց սորա զհետերթանքն յօրի-

“ նեցից . եթէ 'ի սպառընդ լուութեամբ

“ ծածկեսցուք զայս արկած : Ռ. Ա. մի .

“ զի յաջողութեան տարփողք և 'ի

“ ձախողակէն թուիցիմք զարհուրեալք,

“ մեք՝ որ հանապազ՝ ի սոսին դեղերիմք,

“ և զնմանելն սոցա գրեմք մեզ փառս,

“ մի թագուցիք և նոցայն վիշտ՝ յորմէ

“ այնքան աձեցին նոցա փառք առ ՚ի

“ յլստուծոյ :

( ԱԿԱՐՏՆ ՑԱՌԱՋԿԱՅԵՍ . )

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂՎԱՌՈՒԹԻՒՆ .

ԱԶԳԱՅԻՆ ՌԱՄԿԱՅԱՆ ԵՐԳԵՐ

Վ էմաբանութիւն երինի և երիբի :

ՌՅՍ իմաստազուարձերգոյս հեղի-  
 նակն է Ռերսէս անուամբ վարդապետ  
 մը, որուն ժամանակը կ'երևնայ թէ  
 ասկէ երկու դար մը առաջ եղած պի-  
 տի ըլլայ . քանի մը տողուր որ կէտեր  
 դրած ենք՝ դուրս թողուցինք շփոթ-  
 գրուած և անհարազատ երենալուն  
 համար, ինչպէս վերջի տողերն ալլաւ  
 կասպակցութիւն մը չեն ցուցըներ :

ԼԱՐԿԻՆՔՆ ու գետինքն եղբարք,

ՌՃապ ո՞ր քան զորն աւելի . —

Օ երկնից բարձրութիւնն ասեմ,

Ռա գետնին պըտուղն աւելի :

ԼՃՐԿԻՆՔԸ գետնին ասաց .

Ռան ունիմքանց քեզ աւելի ,

Ռզպայծառագուն աստղունքս ,

Ռմէնն իմ կողէս կուլինի :

Գետինն երկընուցն ասաց ,

Ռստուծոյ մուննաթն աւելի .

Վ եցհազարագուն ծաղկունքս

Վմէնն իմ կողէս կուլինի :